XXII

ՆՈՐ-ԴԱՐ

XXII

№ 50 Հինգշաբթի, 1 Դեկտեմբերի

1883 — 1905

Հինգշաբթի, 1 Դեկտեմբերի № 50

Բաժանորդագինը պատի ծանքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը (Թիֆլիսում) 1 ր., հասալ՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., անկրկնների համար տասնչորս հազարական։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց Ջարդը։
Հայ-Թրքական կռիւը Թիֆլիսում։
ՓՐՈՆԿՈՆ.—Թիֆլիս։ Ռուսիա։
Մեզ գրում են.—Ռուսավիից։ Նոր-Նախիջևանից։
Ապատամբութիւն Կիւի գօրքի մէջ։
Նամակ խմբագրութեան։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. — Նամակ Գաբռկատանից, Թէհրան։

ՀԱՅՈՑ ՋԱՐԴԸ

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են նոյ. 26-ից.—Այսօր, առաւօտեան, քաղաքումս լուր սփռուեց, որ Դամարլումում սկսուել են չարագուշակ շարժումներ, և մինչև անգամ տեղի են ունեցել մի քանի մարդասպանութիւններ։ Պատճառը հետևում է մի քանի տարեմուտից ի վեր կիսովին անյայտանալը. թէ անյայտացողները ո՞ր ազգից են, յայտնի չէ։ Դէպքի վայրը գնաց զաւառապետ Աւագեանցովը մի քանի սարաժիներով։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։ Եռւզիչ լուրեր են գալիս նաև Իգդիրի շրջանից։ Ասում են, որ սահմանագլխում երևացել են ահագին թուով քրդեր։

— Քաղաքումս կեանքն առհասարակ խաղաղ է, առ այժմ կեանքը մեռած է, առևտուրը խափան, բոլորի դէմքի վրայ նկատւում է մի տեսակ տըխրութիւն ու յուսահատութիւն. գիմնազիաների գործադուլը շարունակւում է, նրանց միացել են, քաղաքային երկդասեան և Պուշկինեան դպրոցի աշակերտները. գլխաւոր պատճառը դպրոցների վատ տեղ լինելն է։ Երկուսն էլ Թրքական թաղերումն են։ Մեր հարևանները, մերձլինի արհեստանոցները, ուսեստի պաշարելն են հաւաքում. արդեօք մեզ սով չի՞ սպասում, որ նրանք ամէն բան ամբարում են...

—

Օրմփեան Մեսրոպ բերդին կից Զօրաբաշի եկեղեցու դիրքը բարձր է և օրտեղից կարելի է իր ամէն գեան մեռած ընկած Թրքական թաղը լաւ դիտել, մենք ինքներս ենք ուղղ քահանայ Մանդակունուց, որ քանակում է յիշեալ եկեղեցու քակում, օրագրական կարգով արձանագրելու Թրքական Թաղում կատարուող անցքերը, և հրատարակում ենք։

Հոկտեմբերի 21-ից սկսեց Թուրքերի Ռամազանը, և շարունակ ամէն օր ու գիշեր մէկ մէկ տարբանակ արձակում էին, իսկ Ռամազանի վերջին գիշերը և հետևեալ օրը գրեթէ շարունակ՝ հարկաւ դէպի օդը, լսւս որում ոչ օքի մի որ և է ձևաս չպատահեց. այսպէս կէսգ ու կուսգ շարունակում էին. և ընդ նմին իրենց դերեղմանատանը և յայտնի տներում ժողովներ էին անում և ուրախ տրամադրութեամբ ցրւում։

Նոյեմբերի 22-ին, երեքշաբթի երեկոյեան ժամը 8-ին, Թուրքերը յանկարծ սկսեցին հրացանաձգութիւն Սէյդաբաթի, Խարբուխի և Դանիլ Թաղերի բոլոր տներից և դիրքերից. այս անսովոր միահամուռ որոտմունքները հարկաւ մեզ սարսափեցրին, բայց կէս ժամից յետոյ դաշնակցական հայ կուրծներն գալը՝ մեզ շունչ և ոգի տուաւ, և որոնք սկսեցին հրազէնով պատասխանել, նրանց ցոյց տալու համար՝ մեր ի պատրաստի լինելը. ըստ որում չհամեցան զուր ի զուր տեղը փամփուշտներ փչացնել. իսկ հրացանաձգութիւնը Թուրքերի կողմից շարունակուեց գիշերը մինչև ժամը 12-ը։

Նոյեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին քահոյդ պակաս, Թուրքերը կրկին իրենց բոլոր դիրքերից սկսեցին հրացանաձգութիւնը շարունակել մինչև ժամը 12-ը. հրը գադրեցրին, երեք ֆայտոնով եկան նըրանց բարձր և յայտնի հոգևորականները՝ հետները քաղաքացիական մի քանի հայ պաշտօնեաներ. խօսեցին հաշտութեան մասին. բարձր հոգևորականներից մէկն ասաց. «Ես իմ վիզը կըկտրեմ, եթէ մեր կողմից որ և է մէկը հրացան արձակէ»։ Միւսն ասաց. «Իմ գլխին դիպչի հրացանի գնդակը, եթէ մեր կողմից մէկն արձակէ»։ Երրորդը դառնորէն էր հաւատացնում, որ այլ ևս ոչ մի թշնամական ցոյց չի լինելու։ Հայերը պատասխանեցին. «Ձեր ձր երդումներին հաւատանք, Բագրատ Թաիրօներով երդումներին, Շուշու երդումներին, Երևանի երդումներին, Հին-Նախիջևանի երդումներին, Դանձակի երդումներին, ամենաս քաղաքում հանդիսաւոր երդումներին. վերջապէս այս ձևր երդումներին էլ հաւատս կըճնծայենք և հրացան չենք արձակիլ. այս էլ կըվերջենք»։ Աւելորդ չեմ համարիլ շեշտելու, որ ես էլ որպէս հայ հոգևորական հաւատալով նրանց հառնդագին յորդորների և ջերմ աղաչանքների անկեղծութիւնը՝ ապաչում և յորդորում էի հայ կուրծներին հաշտուելու։

Նոյեմբերի 24-ի առաւօտեան 8 ժամին Թուրքերը, հակառակ իրենց հոգևորականների երդմանց, բոլոր դիրքերից որոտացրին հրացանաձգութիւն մինչև ճաշուայ ժամը 11-ը. յետոյ տեսանք մի ինչ-որ պարսկական մաքուր տարազով պարիկ երիտասարդ, որն սկսեց սպիտակ թըղթեր կպցնել մեր դիմացի կրպակներին, և մէջ ու մէջ թողնում էր բաց։ Նոյն օրը ճաշից յետոյ ժամը 3-ին Թուրք խուժանն սկսեց խառնիճաղանճ ձայներով թալանել ծխախոտի «Լև» գործարանը, և սրան կից արձակիչին հրացաններ, բայց գիշերը հանդիստ անցաւ։

Նոյեմբերի 25-ի առաւօտեան ժամը 8-ին տեսանք Թուրքի չկպցրած կրպակներն արդէն թալանած. իսկ զապախանայի փոած կաշիները հանգիստ կրում էին՝ կարծես թէ իրենց հօր սեպհականութիւնն է. սոցիալ-դեմոկրատները թալանող Թուրքերի վրայ ուշադրութիւն չէին դարձնում, այլ առաւելապէս Թուրք, հայ և վրացի ընտանիքներին տեղափոխում էին իրենց պաշտպանութեամբ քաղաքիս զանազան մասերը. իսկ ճաշից յետոյ ժամը 3-ից քառորդ անց Թուրքերը մի փոքր ինչ հրացաններ արձակեցին և լռեցին։

Նոյեմբերի 26-ին Թուրքերը կրպակներ և գործարաններ կոտրելով թալանները էին անում, փոքրիկ պատանիներն ու աղաներն անգամ վերվեր ցատկելով ուրախ-ուրախ կրում էին թալանածները։ Նոյն օրը ժամը 2-ին աղջկա կառքով եկաւ, վրան արիւնաթաթաւ. նոյն րոպէին լեզապատառ հարցրի՝ «Ձեր է փեսաս». աղջիկս պատասխանեց՝ «Միամիտ կացէք, փեսադ կալուածքումն է, իսկ ես եկել եմ իմ սազր Դաւիթ Արամեանցի հետ. նրան թեթև վիրաւորել են. վակզալում հայ գաշնակցականները նրան տարան բժշկի մօտ։ Վրայիս արիւնը նրա վերքերից է»։

Մ. Արամեանցի Ախտալայի կալուածքի կառավարիչը՝ Իշխան Արամեանցը (իմ փեսան), լսելով Թուրքերի աւերածութիւնները Բորչալուի իրենց մեծ կալուածքում, սկսում է բոլոր ունեցածների մի մեծ մասը բազած տալ, իսկ ոսկեղէն ականակուռ զարդերը, արծաթեղէնները և դրամները յանձնում է իւր կնոջ և իւր մեծ եղբայր Դաւթի հետ նըրա տեսնում երկաթուղու 1 համարի կառսում և ճանապարհ դնում դէպի Թիֆլիս։ Գնացքն առաւօտեան ժամը 9-ին երբ հասնում է Սաատլու, կայարանը և կանգնում, Թուրքերն ամենից առաջ բռնում են մեքենավարին, յետոյ մնում և ճանապարհորդներին թալանում. աղջիկս կանդում է իւր տագր առաջ և աղաչանքով չի թողնում որ նրան սպանեն, ուստի սկըսում, են մօտները եղածը թալանել, ճամբրուկը աղջկանս վերայից թրով կտրել և տանել. երբոր տագրը ոսկեղէնները տանելուն դիմադրում է, թրով խփում են երեսին և ձեռքին և այսպէս յոտիշտակում. մի կարգ Թուրքերը դուրս են գնում՝ իսկոյն մի ուրիշ կարգ ներս մտնում և Դաւթի մօտ ինացածը—քսակը, վերնազգեստը, գլխարկը և մաուզերի հրացանը և եղբեք չէմատան լիքը հարսանեկան թանկագին զգեստներով և տանու թանկ իրեղէններով—տանում. աղջկանս էլ քարշ են տալիս դէպի դուրս, բայց տագրը պինդ բռնած չի թողնում. վերջապէս Դաւիթ Արամեանցից և աղջկանիցս տարել են 4000 րուբլու դրամ և թանկագին իրեղէններ. նոյն կլոստում այլև թալանում են քաղաքիս բժշկապետ Պոչարեանցին, որը իւր որդոց հետ Թիֆլիս էր վերադառնում իւր կալուածքից։

Նոյեմբերի 27-ի երեկոյեան հրը ժամերգութիւնս վերջացրել և դուրս էի եկել եկեղեցու դրսի դռանը պատի մօտ և խօսում էի ի պատրաստի կանգնած հայ փեդայիների հետ, ճիշտ ժամը 5-ին քառորդ պակաս, յանկարծ Թուրքերը որոտացրին հրացանները և տեղատարափ կրկին պէս գնդակներ թափեցին ամեն կողմերից. լեզապատառ վազեցի և ինձ մի կերպ մեր նկուղը ձգեցի, իսկ հայ պաշտպանները էլ վազեցին իրենց դիրքերը և 5 րոպէից յետոյ հակիրճ իրենց մեծերից հրացանով պատասխանելու իրաւունք առացան։ Թուրքերը 20 րոպէ, իսկ հայերը 15 րոպէ տարաձգելի կերպով շարունակ զըդրդիցնում էին կուռ գետ ալ ափի Վարանցովսկայա փողոցի ընդարձակութիւնը. երբոր մերոնք դեռ շարունակում էին, հայ մեծերը հրամայեցին դադարեցնել, անօգուտ տեղը փամփուշտներ չիշացնել. իսկ Թուրքերը գոռ հրացանաձգութիւնից յետոյ գիշերը մինչև ժամը 9-ը երբեմն սաստիկ և երբեմն թոյլ շարունակում էին։

Նոյեմբերի 28-ի առաւօտեան ժամը 7-ից սկսած Թուրքերն իրենց բոլոր դիրքերից սկսեցին անընդհատ կրակներ արձակել և գնալով ուժգին սաստկացնել այն։ Հայերին արգելեցին պատասխանել, րատ որում քաղաքացիական իշխանութիւնը յայտնի սուգից միշտ Թուրքերի նախարձակ լինելը, և այնուհետև զօրքն սկսեց զալով տալ. սոցիալ-դեմոկրատներն էլ նրանց հետևեցին, նոյնպէս և հայ կուրծները, և այսպէս տեղի տուաւ պլխներից մէնջուրական պատերազմների ժեր կարդացած երևակայական սարսափները. սա արդէն նրանցից գերազանցեց, որովհետև տեղատարափ մարդասպան գնդակների կարկտանների իրենց անարկու որոտմունքներով շարունակեցին երեկոյեան մինչև ժամը 5-ը. իսկ գիշերը ժամը 8-ին և 2 և կէսին Թուրքերը կրկին մեծ որոտմունքներով գնդակների հեղեղ Թափեցին և լռեցին։ Հայերը չկամեցան պատասխանել, միայն մի երկու արձակումով յայտնեցին իրենց պատրաստ լինելը։ Իսկ Թուրքերն իրենց բնակութեան աւերող բնաւորութեանց համաձայն մեռ դիմացի Ալաջացովկայա փողոցի նորաշէն կրպակները հրդեհ հանելու։

Նոյեմբերի 29-ին, այսօր, առաւօտեան, տեսանք, որ յիշեալ կրպակները հանգիստ վառուում են, ոչ ոք չի համարձակուում մօտենալ. ամօթ է ասել, որ ապրում ենք 20-րդ դարի մէջ, և այն՝ լուսաւորեալ։

Զօրաբաշի քառաժայռի վրայ երկար ու ձիգ փողոցի տները, որոնց կարգում և մեր տները, դէպի հարաւ Թուրքերի թաղը նայող, բոլորն էլ կարկտահար են եղած Թուրքերի գնդակներից։

ՀԱՅՏ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նոյեմ. 22-ին խանգարուած՝ հայ-Թրքական մինչև այդ ժամանակ շարունակուող խաղաղ դրացիական յարաբերութիւնները դեռ ևս շարունակում են ծայրայեղագէս լարուած ու թշնամական վիճակի մէջ մնալ։

Կասկած չկայ, որ Թիֆլիսի մի բուռ Թուրք բնակչութիւնը հայ ազգաբնակութեան ջախջախիչ բազմութեան առաջ չէր համարձակուիլ, ինչպէս ժողովուրդն ասում է, ծպտուն անգամ հանելու, եթէ նա յոյս զրած չլիներ դրսեցի իւր հաւատակիցների կողմից լինելիք օգնութեան վրայ։

Այդ յոյսերն ամբողջովին արդարացած էին։

Նոյեմ. 26-ին քաղաքում յամառ կերպով լուրեր էին շրջում Բորչալուի գաւառից զինուած Թուրքեր քաղաք խուժած լինելու մասին։

Դժուար էր ժողովրդի մէջ բերնից բերան շրջող վրդովեցուցիչ այդ լուրերն ստուգել, ուստի, սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, որը իւր վըրայ էր առել հայ-Թրքական ընդհարումներին վերջ տալու և երկու ըշխատի կողմերի միջև հաշտութիւն կայացնելու գործը, կամենում է տեղն ու տեղն ստուգել բորչալուեցի եկուորի գաւառից զինուած Թուրքեր քաղաք խուժած լինելու մասին։

Դժուար էր ժողովրդի մէջ բերնից բերան շրջող վրդովեցուցիչ այդ լուրերն ստուգել, ուստի, սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, որը իւր վրայ էր առել հայ-Թրքական ընդհարումներին վերջ տալու և երկու ըշխատի կողմերի միջև հաշտութիւն կայացնելու գործը, կամենում է տեղն ու տեղն ստուգել բորչալուեցի եկուորի գաւառից զինուած Թուրքեր քաղաք խուժած լինելու մասին։

Նոյեմբերի 28-ի առաւօտեան ժամը 7-ից սկսած Թուրքերն իրենց բոլոր դիրքերից սկսեցին անընդհատ կրակներ արձակել և գնալով ուժգին սաստկացնել այն։ Հայերին արգելեցին պատասխանել, րատ որում քաղաքացիական իշխանութիւնը յայտնի սուգից միշտ Թուրքերի նախարձակ լինելը, և այնուհետև զօրքն սկսեց զալով տալ. սոցիալ-դեմոկրատներն էլ նրանց հետևեցին, նոյնպէս և հայ կուրծները, և այսպէս տեղի տուաւ պլխներից մէնջուրական պատերազմների ժեր կարդացած երևակայական սարսափները. սա արդէն նրանցից գերազանցեց, որովհետև տեղատարափ մարդասպան գնդակների կարկտանների իրենց անարկու որոտմունքներով շարունակեցին երեկոյեան մինչև ժամը 5-ը. իսկ գիշերը ժամը 8-ին և 2 և կէսին Թուրքերը կրկին մեծ որոտմունքներով գնդակների հեղեղ Թափեցին և լռեցին։ Հայերը չկամեցան պատասխանել, միայն մի երկու արձակումով յայտնեցին իրենց պատրաստ լինելը։ Իսկ Թուրքերն իրենց բնակութեան աւերող բնաւորութեանց համաձայն մեռ դիմացի Ալաջացովկայա փողոցի նորաշէն կրպակները հրդեհ հանելու։

Նոյեմբերի 29-ին, այսօր, առաւօտեան, տեսանք, որ յիշեալ կրպակները հանգիստ վառուում են, ոչ ոք չի համարձակուում մօտենալ. ամօթ է ասել, որ ապրում ենք 20-րդ դարի մէջ, և այն՝ լուսաւորեալ։

Զօրաբաշի քառաժայռի վրայ երկար ու ձիգ փողոցի տները, որոնց կարգում և մեր տները, դէպի հարաւ Թուրքերի թաղը նայող, բոլորն էլ կարկտահար են եղած Թուրքերի գնդակներից։

ՀԱՅՏ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նոյեմ. 22-ին խանգարուած՝ հայ-Թրքական մինչև այդ ժամանակ շարունակուող խաղաղ դրացիական յարաբերութիւնները դեռ ևս շարունակում են ծայրայեղագէս լարուած ու թշնամական վիճակի մէջ մնալ։

Կասկած չկայ, որ Թիֆլիսի մի բուռ Թուրք բնակչութիւնը հայ ազգաբնակութեան ջախջախիչ բազմութեան առաջ չէր համարձակուիլ, ինչպէս ժողովուրդն ասում է, ծպտուն անգամ հանելու, եթէ նա յոյս զրած չլիներ դրսեցի իւր հաւատակիցների կողմից լինելիք օգնութեան վրայ։

Այդ յոյսերն ամբողջովին արդարացած էին։

Նոյեմ. 26-ին քաղաքում յամառ կերպով լուրեր էին շրջում Բորչալուի գաւառից զինուած Թուրքեր քաղաք խուժած լինելու մասին։

Դժուար էր ժողովրդի մէջ բերնից բերան շրջող վրդովեցուցիչ այդ լուրերն ստուգել, ուստի, սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, որը իւր վրայ էր առել հայ-Թրքական ընդհարումներին վերջ տալու և երկու Թշնամի կողմերի միջև հաշտութիւն կայացնելու գործը, կամենում է տեղն ու տեղն ստուգել բորչալուեցի եկուոր

ՂՉ ՄՄՍԻՆ ՃՇԳ

ՕՍՈՏԱՅԻՆ—Մարտական կեանք

Ամառ:

Ամառ է: Ամառուան տաք ու ոսկեգոյն արեւի ներքեւ ամէն ինչ կը հալի, կը տաքնայ, կը հասունայ, կը հրճուի, կը ծիծաղի, կը խնդայ, կը զուարճանայ, կը ցնծայ, կը հեշտանայ, կը զուարթանայ, կը ժպտի, կը սիրէ, կը սիրուի, կը տենչայ, կը տենչացուի, կը տոչորի, կը տոչորեցնէ, կը տանջուի, կը տանջէ, կը տանջուի, կը տանջէ, կը տանջուի, կը տանջ